**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380389*
*Էլ. փոստ info@moj.am*

02.09.2014 N 01/05.31-14

Ձեր N ________________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Ջավադյան**

Ի պատասխան Ձեր 2014 թվականի օգոստոսի 19-ի 15.1-06/000700-14 գրության՝ կից ներկայացվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի առնչությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Կատարող՝ Անի Մկրտչյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 380-227

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

1. Օրենքի նախագիծը /այսուհետ՝ նախագիծ/ համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նախագիծը համապատասխանում է հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:

5. Իրավական ակտում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունն առկա է:

6. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

1/ նախագծի վերնագրից անհրաժեշտ է առանձնացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը:

2/ Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ հաջորդականությամբ նշել օրենքի ընդունման տարին, ամիսը և ամսաթիվը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

3/ Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսվող փոփոխությունների և լրացումների անհրաժեշտությունը պարզ չէ, քանի որ օրենքի 6-րդ հոդվածն

ամբողջությամբ նոր խմբագրությամբ է շարադրված նախագծի2-րդ հոդվածի 4-րդ մասով:

Այս առումով նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների շարադրանքն անհրաժեշտ է վերանայել՝ վերջիններս համապատասխանեցնելով օրենսդրական տեխնիկայի կանոններին:

4/ Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասով նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 6-րդ հոդվածում անհրաժեշտ է «իսկ ավանդատուի գրավոր պահանջի» բառերից հետո լրացնել «կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված պահանջի» բառերը:

5/ Նախագծի 8-րդ հոդվածում անհրաժեշտ է «օրվանից» բառը փոխարինել «օրը» բառով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների:

8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 7-րդ կետին:

**«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

1. Օրենքի նախագիծը /այսուհետ՝ նախագիծ/ համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նախագիծը համապատասխանում է հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:

5. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի

նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

6. Իրավական ակտում համապատասխան փոփոխություն կատարելու անհրաժեշտությունն առկա է:

7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

1/ նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ հաջորդականությամբ նշել օրենքի ընդունման տարին, ամիսը և ամսաթիվը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

2/ Նախագծի 1-ին հոդվածում անհրաժեշտ է «ՀՕ-262-Ն» բառը փոխարինել «ՀՕ-262» բառով:

8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 7-րդ կետին:

## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բանկերի, վարկային կազմակերպությունների,

ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

**ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**